# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԵԵԿԿ-ԳՀԾՁԲ-26/5 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 17 մարտի 2026թ.

2026թ-ի մարտի 17-ին՝ ժամը 11:30-ին, ՀՀ, ք. Երևան, Քըրք Քըրքորյան 16 հասցեում գտնվող «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի շենքում տեղի ունեցավ քարթիջների լիցքավորման ծառայությունների ձեռքբերման **ԵԵԿԿ-ԳՀԾՁԲ-26/5** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ի. Նիկողոսյան՝ | «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի փոխտնօրեն, |
| Ա. Դավթյան՝ | «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի վարչատնտեսական բաժնի պետ, |
| Ջ. Թովմասյան՝ | «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի հաշվապահ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ի. Նիկողոսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, գնումների մասնագետ Մ. Սիմոնյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր երեք անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
3. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:
4. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ-ի մարտի 17-ին՝ ժամը 11:30-ին, ՀՀ, ք. Երևան, Քըրք Քըրքորյան 16 հասցեում գտնվող «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի շենքում ժամը 11:30-ին Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված նախահաշվային գները.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Ընդամենը՝ միավոր գների հանրագումարը | Գնման հայտով սահմանված ընդհանուր առավելագույն գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1-ին | քարթրիջների լիցքավորման, սպասարկման և վերանորոգման ծառայություններ | 52,000.00 | 300,000.00 |

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց տեղեկատվություն գրանցամատյանում կատարված նշումների մասին և Հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026թ-ի մարտի 17-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ Ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2026թ-ի մարտի 17-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 4. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

*Ի. Նիկողոսյան* ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

*Ա. Դավթյան* ____________

*Հ. Թովմասյան* ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

*Մ. Սիմոնյան* ____________